ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2018 թվականի մայիսի 27-ից 29-ը Բելգիայի Թագավորություն (Բրյուսել) կատարած գործուղման արդյունքների վերաբերյալ

1. **Անուն, ազգանունը՝**

Արտակ Մարության

2. **Զբաղեցրած պաշտոնը՝**

ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի պետական պարտքի կառավարման վարչության հաշվառման և սպասարկման բաժնի պետ - վարչության պետի տեղակալ

3. **Գործուղման վայրը և ժամկետները՝**

ք. Բրյուսել, մայիսի 27-ից 29-ը ներառյալ

4. **Հրավիրող կողմը՝**

Համաշխարհային Բանկ (ՀԲ) և Եվրոպական Հանձնաժողով

5. **Գործուղման նպատակը՝**

Մասնակցություն Պարտքի կառավարման գործիքի շահառուների 9-րդ ֆորումին

6. **Քննարկված թեմաները՝**

Ֆորումն անց էր կացվում «Պարտքի աճող ծավալ՝ ռիսկեր, կայունություն, պատասխանատվություն» խորագրով և նպատակ էր հետապնդում ստեղծել հարթակ զարգացող երկրների առջև ծառացած պետական պարտքի կառավարման խնդիրների քննարկման համար: Քննարկումը նախատեսված էր քաղաքական գործիչների, պարտքի կառավարիչների, միջազգային ու տարածաշրջանային տեխնիկական աջակցության տրամադրողների, քաղաքացիական հասարակության, ինչպես նաեւ երկկողմ դոնորների և բազմակողմ զարգացման գործակալությունների ներկայացուցիչների համար:

Ֆորումի օրակարգը (կցվում է) բաղկացած էր պլենար նիստերից և թեմատիկ քննարկումներից, ընդ որում երկու թեմատիկ քննարկումներ անց էին կացվում միևնույն ժամանակ տարբեր սրահներում, ուստի ֆիզիկապես հնարավոր չէր ապահովել մասնակցություն բոլոր թեմատիկ քննարկումների:

1. Պլենար նիստերի և թեմատիկ քննարկումների ընթացքում փորձագետների կողմից ներկայացվեցին արդի փուլում զարգացող երկրների առաջ ի հայտ եկած պարտքի կառավարման հիմնական մարտահրավերները և դրանց լուծման հնարավոր տարբերակները:

Մասնավորապես մատնանշվեցին դրանցից հետևյալները.

- զարգացող երկրներից շատերում կորել է կապը պարտքի աճի և պետական ներդրումների աճի միջև՝ պետական պարտքի ծավալն աճում է ավելի արագ, քան այն մարելու կարողությունները և իրականացվող պետական ներդրումների ծավալը: Այսինքն՝ պարտքի ծավալի աճի պատճառ են հանդիսացել արտարժութային պարտքի ծավալի աճը և դրա վերագնահատումը ազգային արժույթով, ոչ կապիտալ բնույթի ծախսերի ֆինանսավորումը փոխառությունների հաշվին և այլն,
- թափանցիկության և հաշվետվողականության պակաս: Մասնավոր դեպքերում՝ պարտքի կառավարման գծով թափանցիկության պակասը և պարտքի թերի հաշվառումը կարող են հետագայում պարտքի ծավալի հանկարծակի աճի և վարկանիշի նվազեցման պատճառ հանդիսանան,
- զարգացող երկրներում շեշտակիորեն աճել են ֆինանսավորման կարիքները և այն աճում է ավելի արագ, քան պաշտոնական աջակցությունը զարգացած երկրների և միջազգային կառույցների կողմից: Արդյունքում այդ երկրների պարտքի կառուցվածքում շեշտակիորեն աճել է մասնավոր հատվածից ներգրավված պարտքի տեսակարար կշիռը, ինչն որոշ երկրներում կազմում է ընդհանուր պարտքի 20-50%-ը և այն հատկապես աճել է 2015-2017 թվականներին՝ պայմանավորված շուկայում ձևավորված ցածր տոկոսադրույքների պայմաններում այդ երկրների կողմից միջազգային կապիտալի շուկայում իրականացված արտարժութային պարտատոմսերի ակտիվ տեղաբաշխումներով,
- զարգացող երկրների կողմից նախկինում թողարկված արտարժութային պարտատոմսերի մարումը/վերաֆինանսավորումը, որոնց մեծ մասն ենթակա է

մարման 2020-2023 թվականների ընթացքում՝ ներկայումս արձանագրված տոկոսադրույքների աճի միտման պայմաններում,

- զարգացող երկրների կողմից արտարժութային պարտատոմսերի նոր թողարկումները մեծամասամբ իրականցվում են նախկին թողարկումների վերաֆինանսավորման նպատակով,
- միջազգային և երկրկողմ վարկատուների/դոնորների միջև համագործակցության և տեղեկատվության փոխանակման պակաս,
- պետական պարտքի սպասարկման բեռի աճ՝ արտահայտված որպես տոկոս ՀՆԱ-ի և պետական բյուջեի ծախսերի նկատմամբ:

Նշված խնդիրների լուծման և առաջիկայում հնարավոր ռիսկերը նվազեցնելու/մեղմելու ուղղությամբ հնչեցվեցին հետևյալ առաջարկները.

- շարունակել ներքին պարտքի շուկայի զարգացման ու խորացման ուղղությամբ աշխատանքները և աստիճանաբար ավելացնել ներքին աղբյուրներից ներգրավող փոխառու միջոցների ծավալները և դրանց կշիռը ընդհանուր պակասուրդի ֆինանսավորման կառուցվածքում՝ հաշվի առնելով նաև պոտենցիալ ներքին շուկայի ծավալը և ծախս-ռիսկ վերլուծության արդյունքները: Այս խնդրին էր նվիրված առանձին պլենար նիստ որտեղ ներկայացվեցին Դանիայի, Իտալիայի, Նիգերիայի և Շրի Լանկայի փորձը,
- ձևավորել ֆիսկալ բուֆեր՝ հնարավոր անբարենպաստ պայմաններում կառավարության ֆինանսական կարիքների բավարարման և հարկաբյուջետային կայունության ապահովման համար: Ներկայացվեցին Ռումինիայի օրինակը, որը ձևավորել է արտարժութային բուֆեր՝ չորս ամսվա համախառն ֆինանսական կարիքի մեծության չափով, և Դանիայի օրինակը, որտեղ ֆիսկալ բուֆերը կազմում է ՀՆԱ-ի մինչև 5%-ը:
- հզորացնել հարկաբյուջետային ռիսկերի բացահայտման, գնահատման և դրանց նվազեցման գծով ֆինանսների նախարարությունների համապատասխան

ստորաբաժանումների կարողությունները: Կարևորվեց շոկերը ստանդարտ ռիսկերից տարանջատելու խնդիրը և հաջորդ շոկին դիմագրավելու համար նախկինի ազդեցության և դիմագրավման փորձի ուսումնսիրությունը՝ հիշելով, որ շոկերն հազվադեպ են կրկնվում և յուրաքանչյուր երկրի համար դրանց հաղթահարման, ազդեցության մեղմման լուծումները տարբեր են և յուրօրինակ,

- բարձրացնել պետական պարտքի կառավարման թափանցիկությունը և բարելավել հաշվետվողականությունն ու հրապարակայնությունը: Պարտքի վիճակագրության միասնական մեթոդաբանության, հասկացությունների կիրառում և պարտքի վերաբերյալ տվյալների միասնական շտեմարանների ձևավորում: Կարևորվեց համապարփակ, ամբողջական և արժանահավատ տվյալների անհրաժեշտությունը վերլուծական աշխատանքների և ծրագրերի/ռազմավարությունների մշակման և որոշումների կայացման ընթացքում, մատնանշվեցին թերի տեղեկատվության օգտագործման հետ կապված ռիսկերը,

  Համաշխարհային բանկի ներկայացուցիչ Գրանտ Կամերոնը իր ելույթի ժամանակ տեղեկացրեց, որ ներկայումս քայլեր են ձեռնարկվում ՀԲ-ի կողմից բոլոր անդամ-պետություններից պարբերաբար ստացվող արտաքին (պետական և մասնավոր) պարտքի մասին հաշվետվություններին նաև ներքին պարտքի վերաբերյալ հաշվետվություններ ավելացնելու ուղղությամբ: Ներկայացվեց նաև արտաքին պարտքի գծով հաշվետվություններում թույլտրվող նմանատիպ սխալները, դրանց վերաբերյալ պարզաբանումներ, 2017թ. տվյալների ներկայացման համար ներդրված նոր կոդերը՝ վարկատու-երկրի, կառույցի, պարտավորության արժույթի և այլ ցուցանիշների գծով,
- էլ ավելի խորացնել միջազգային և երկրկողմ վարկատուների/դոնորների միջև համագործակցությունը,
- վարկառուների հետ մեկտեղ բարձրացնել զարգացման միջազգային կառույցների պատասխանատվությունը ծրագրերի իրականացման գծով, մասնավորապես մինչև վարկային համաձայնագրի կնքումը ուսումնասիրել այն իրականոցնողի

կարողությունները, առավելագույնս նախապատրաստել իրականացման փուլը, ներդնել ծրագրի իրականացման մշտադիտարկման համակարգ,

- կարևորվեց նաև ֆինանսավորման ենթակա նախագծերի ընտրությունը և ընտրության համար չափորոշիչների սահմանումը: Ռուանդայի պարտքի կառավարման գրասենյակի ղեկավարը ներկայացրեց իր երկրի փորձը, համաձայն որի հաշվի առնելով արտոնյալ ֆինասավորման ներգրավման հնարավորության նվազումը և առկա պարտքային սահմանափակումները, սահմանվել են նախագծերի ընտրության հստակ չափանիշներ և արտոնյալ վարկերը բաշխվում են միայն սահմանված առաջնահերթություններին համապատասխանող ծրագրերի միջև, իսկ առևտրային պայմաններով արտաքին փոխառությունները դիտարրկվում են միայն որպես վերջին տարբերակ շահութաբեր և արտարժույթ գեներացնող նախագծերի ֆինանսավորման համար,
- դիվերսիֆիկացնել ներդրումների ֆինանսավորման աղբյուրները, մասնավորապես պետություն-մասնավոր համագործակցությունը, երաշխիքների տրամադրումը, ենթավարկավորման հնարավորությունը, բնապահպանական ծրագրերի ֆինանսավորման ուղղությամբ նորարարական մեթոդները (օր. «պարտքը բնապահպանության ծախսերի դիմաց»): Կարևորվեց նաև այդ նոր գործիքակազմի ճիշտ հաշվառումը և արտացոլումը,
- պետական պարտքի կառավարման գրասենյակներում զարգացնել պարտավորությունների կառավարման (սվոփ, փոխանակում, հետգնում և այլն) գծով կարողությունները՝ արտոնյալ ֆինանսավորման նվազման և ռիսկերի կառավարման համատեքստում,
- բարձրացնել ֆինանսների նախարարության դերակատարումը պետական պարտք ներգրավելու գործընթացում և վերջինիս տրամադրել բացառիկ լիազորություն պետության անունից պարտք ներգրավելու գործում,
- պարտքի բեռի նվազեցման նախաձեռնությունների շրջանակներում հետագա պարտքային քաղաքականության գծով մոնիտորինգ: Պարտքի բեռի

նվազեցման/վերաձևակերպման իրականացում Արժույթի Միջազգային Հիմնադրամի հետ համատեղ, ինչն կիրականացվի միասնական մոտեցումների/ծրագրի շրջանակներում և վարկառու երկրի համար ավելի կդյուրացնի հետագա շփումը վարկատուների (հատկապես, մասնավոր) և վարկանշային գործակալությունների հետ,

2. Համաշխարհային Բանկի պարտքի գծով գլխավոր մասնագետ Լիլիա Ռազլոգի հետ պայմանավորվածություն ձեռք բերվեց առ այն, որ ՀԲ մասնագետները կուսումնասիրեն ՀՀ ֆինանսների նախարարության կողմից իր պաշտոնական կայքում հրապարակվող պարտքի ամսական վիճակագարական և ամսական ամփոփ տեղեկագրերը և կտրամադրեն իրենց գնահատականը և առաջարկությունները դրանց բարելավման ուղղությամբ:

Նշենք, որ 2013թ. Լիլիա Ռազլոգի կողմից ղեկավարած ՀԲ-ի պատվիրակությունը ՀԲ-ի կողմից մշակված մեթոդաբանության համաձայն իրականացրել էր Հայաստանում պետական պարտքի կառավարման գործընթացի գնահատում, որի արդյունքներով կազմված հաշվետվությունում պարտքի ամսական վիճակագրական տեղեկագիրը արժանացել էր D գնահատականի (առկա գնահատման համակարգում ամենացածր գնահատական): Դրա հիմնական պատճառներից են հանդիսացել այն, որ տեղեկագիրը ավելի շատ կենտրոնացած է եղել պետական պարտքի և դրա կառուցվածքի վրա՝ մինչդեռ կարևորվում է կենտրոնական կառավարության պարտքի մասին մանրամասն տեղեկատվության ներկայացումը, ինչպես նաև պարտքի կառուցվածքն ու ռիսկերը բնութագրող որոշակի ցուցանիշների բացակայությունը:

Վերջին ժամանակներում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից իրականացված աշխատանքների արդյունքում էապես բարելավվել է ամսական տեղեկագրի կառուցվածքը և ընդլայնվել է հրապարակվող ցուցանիշների շրջանակը, իսկ սկսած 2018թ. փետրվարից հրապարակվում է նաև դրա համառոտ, ավելի ներկայացուցչական, գծապատկերային տարբերակը:

Նպատակն է համապատասխանեցնել տեղեկագրի որակը և հրապարակման ժամկետը լավագույն միջազգային փորձին և հաջորդ գնահատման ընթացքում ստանալ ավելի բարձր գնահատական:

3. Համաշխարհային բանկի կողմից ընդհանուր դրվակներով ներկայացվեց ցածր եկամուտ ունեցող երկրների համար կիրառվող պարտքի կայունության վերլուծության վերանայված գործիքը, որը կիրառվելու է ԱՄՀ-ի և ՀԲ-ի կողմից 2018 թվականից սկսած: Ներկայացման ընթացքում հիմնական շեշտադրումը կատարվեց նորամուծությունների վրա: Մասնավորապես, ներկայացվեց երկրների դասակարգման և ըստ այդմ նաև այդ երկրի համար պարտքի բեռը սահմանող ցուցանիշների համար առավելագույն առաստաղները սահմանելու նոր մոտեցումները: Նոր մոտեցման համաձայն՝ բացի նախկինում կիրառվող երկրի քաղաքականության և ինստիտուցիոնալ գնահատականից (CPIA) հաշվի են առնվում նաև այլ ցուցանիշներ (օրինակ՝ տնտեսական աճ, միջազգային պահուստներ, դրամական փոխանցումներ, համաշխարհային տնտեսության աճը):
Ներկայացվեց նաև օգտագործվող ստանդարտացված ստրես-թեսթերի գծով փոփոխությունները և նորամուծություն համարվող անհատական ստրես-թեսթերը, որոնք թույլ են տալիս երկրի համար մշակել այդ երկիրի համար բնորոշ ստրես-թեսթեր (բնական աղետներ, որևէ հումքային ապրանքի գների փոփոխություն և այլն):

4. ՄԱԿ-ի Առևտրի և Զարգացման Համաժողովի (UNCTAD) պարտքի կառավարման և ֆինանսական վերլուծության ծրագրի (DMFAS) ղեկավարի հետ հանդիպման ընթացքում քննարկվեցին Ասիական Զարգացման Բանկի ֆինանսական աջակցությամբ ՀՀ ֆինանսների նախարարության մասնագետների համար 2018թ. սեպտեմբերին նախատեսված դասընթացների կազմակերպման հետ կապված հարցերը:

5. ՄԱԿ-ի Առևտրի և Զարգացման Համաժողովի (UNCTAD) պարտքի կառավարման և ֆինանսական վերլուծության ծրագրի (DMFAS) ղեկավարը ներկայացրեց DMFAS-ի և Ազգերի Բրիտանական Համագործակցության համատեղ նախաձեռնությունը պարտքի տվյալների բազաների որակի գնահատման գործիք մշակման և ներդրման ուղղությամբ, որը հաշվի կառնի միջազգային լավագույն փորձը ու պարտքի կառավարման

բնագավառում միջազգային ստանդարտները: Գործիքը իրենով կլրացնի գոյություն ունեցող նմանատիպ գործիքները (DeMPA, PEFA և այլն) և հիմնականում նախատեսված է այն երկրների համար, որոնք կիրառում են պարտքի գրանցման CS-DRMS և DMFAS ծրագրերը: Այն նախատեսվում է ներդնել 2018թ. երկրորդ կիսամյակից:

6. Ռուանդայի պարտքի կառավարման գրասենյակի ղեկավարի հետ հարցազրույցի ընթացքում բանավոր պայմանավորվածություն ձեռք բերվեց առ այն, որ ֆորումի ավարտից հետո վերադառնալով հայրենիք՝ նա էլեկտրոնային փոստով կտրամադրի իր երկրում արտաքին վարկերի հաշվին իրականացվող նախագծերի ընտրության մեխանիզմի նկարագրությունը և կիրառվող ընտրության չափորոշիչները, որոնց համաձայն պլանավորման դեպարտամենտը իրականացնում է ֆինանսավորման ենթակա նախագծերի ընտրությունը:

Կարծում եմ, որ այդ մեխանիզմի ուսումնասիրությունը և փորձը օգտակար կլինի մեր երկրում արտաքին վարկավորմամբ իրականացվող ծրագրերի համար առաջնահերթությունների սահմանման գործում՝ հաշվի առնելով իրականացման փուլում գտնվող ծրագրերի քանակը, դրանց գծով չմասհանված վարկային միջոցների մնացորդը (շուրջ 1.8 մլրդ ԱՄՆ դոլար) և պարտքի մակարդակի նվազեցման օրենսդրական պահանջները:

7. Ղրղզստանի պարտքի կառավարման գրասենյակի ներկայացուցչի հետ հանդիպման ընթացքում վերջինս հետաքրքրվածություն հայտնեց Հայաստանի կողմից 2017 թվականին հարկաբյուջետային կանոնների արդիկանացման գծով իրականացված աշխատանքների ուղղությամբ: Մանրամասն ներկայացվեծ հարկաբյուջետային կանոնների արդիկանացան անհրաժեշտությունը, ԱՄՀ-ի տեխնիկական աջակցության թիմի առաջարկությունները, նախկինում գործող և արդիականացված հարկաբյուջետային կանոնների առանձնահատկությունները:

8. Վրաստանի ֆինանսների նախարարության ներկայացուցչին վերջինիս խնդրանքով ներկայացվել են նախորդ տարվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից պետական գանձապետական պարտատոմսերի շուկայի

զարգացման նպատակով իրականացված աշխատանքները: Վրաստանի ֆինանսների նախարարության ներկայացուցիչը ցանկություն հայտնեց Հայաստանի և Վրաստանի ֆինանսների նախարարությունների երկկողմ համագործակցության շրջանակներում կազմակերպել վրացական գործընկերների աշխատանքային այցը Երևան՝ Հայաստանի ներքին պարտքի շուկային ծանոթանալու և համապատասխան փորձի փոխանակման նպատակով:

7. Գործուղվողը՝

ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի պետական պարտքի կառավարման վարչության հաշվառման և սպասարկման բաժնի պետ - վարչության պետի տեղակալ Արտակ Մարության

9. Ստորագրությունը, ամսաթիվը